

Տարբերակ

1.1 Հաշվել արտահայտության արժեքը.

$$\left(4\frac{1}{2} - 3 : 0.5\right) + 1.5 \cdot \left|4\frac{2}{3} - 3 \cdot 1.6\right|$$

1.2 Առաջին և երկրորդ թվերի տարբերությունը նրանց գումարից մեծ է 18-ով: Գտնել երկրորդ թիվը:

1.3 Լուծել հավասարումը.

$$\frac{3}{y-2.5} = \frac{8}{3-y}$$

1.4 Լուծել հավասարումը.

$$3 - 2x = \frac{20+3x}{2}$$

2.1 AOB անկյան գագաթից տարված ճառագայթը անկյունը տրոհում է 1:3 հարաբերությամբ և անկյան կիսորդի հետ կազմում է 18° անկյուն: Գտնել AOB անկյան մեծությունը:

2.2 Գտնել ուղղանկյուն եռանկյան սուր անկյունները, եթե այդ եռանկյան ուղիղ անկյան գագաթից տարված կիսորդը և բարձրությունը կազմում են 20° անկյուն:

2.3 Ուղղանկյան կողմի վրա վերցված կետը հանդիպակաց կողմի գագաթներին միացնելիս ստացվել են 25 սմ^2 և 55 սմ^2 մակերեսներով ուղղանկյուն եռանկյուններ: Գտնել ուղղանկյան մակերեսը:

3. Մանկապարտեզի 25 երեխաներին բաժանեցին 60 խաղալիք, ընդ որում յուրաքանչյուր աղջկա տվեցին մեկ խաղալիք ավելի, քան տղաներից յուրաքանչյուրին, իսկ բոլոր աղջիկները ստացան նույնքան խաղալիք, որքան բոլոր տղաները: Քանի՞ տոկոսով է ավելի տղաների թիվը աղջիկների թվից:

4. 24 սմ ներքևաձիգով ուղղանկյուն եռանկյան ուղիղ անկյան գագաթից տարված միջնագիծն ուղղահայաց է սուր անկյան կիսորդին: Ուղիղ անկյան գագաթից ի՞նչ հեռավորության վրա են հատվում միջնագիծը և այդ կիսորդը:

5. Գիրքը բաղկացած է երեք գլուխներից, որոնցից երկրորդում 20% -ով, իսկ երրորդում 25% - ով ավելի շատ էջեր կան, քան առաջինում: Քանի՞ թվանշան է օգտագործվել գրքի բոլոր էջերը համարակալելու համար, եթե երրորդ գլխում 6 էջ ավելի կա, քան երկրորդում:

6. Դատարկ ավազանը միայն առաջին խողովակով լցվում է 18 ժամում, երկրորդով՝ 9 ժամում, իսկ երրորդով՝ 6 ժամում, ընդ որում միաժամանակ կարելի է բացել խողովակներից միայն երկուսը: Քանի՞ ժամում է լցվել դատարկ ավազանը, եթե երեք խողովակներն էլ հավասար տևողությամբ են բացել:

7. Գտնել ուղղանկյան մակերեսը, եթե նրա երկու կողմերի երկարությունների գումարի քառակուսին 128-ով մեծ է այդ կողմերի երկարությունների տարբերության քառակուսուց:

Մաղթում ենք հաջողություն